ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում տեղական ինքնակառավարման ոլորտում իրականացված հանձնառությունների վերաբերյալ

01.08.2022թ.

ԲԿԳ–Հայաստան գործողությունների առաջին ծրագրով ստանձնած պարտավորության կատարման արդյունքում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարվել են լրացումներ, որոնք միտված են օրենսդրորեն ամրապնդելու քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, բարձրացնելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը բնակչության մասնակցելու նոր ինստիտուտ է ներդրվել: Համայնքի 16 տարին լրացած բնակիչները հնարավորություն են ստացել համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ հանդես գալ:

Օրենքի մակարդակով կանոնակարգվել են համայնքի բնակիչների ընդունելությունների, հանրային հանդիպումների և քննարկումների կազմակերպման, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի իրականացման վերաբերյալ ավագանու անդամների պարտավորությունները:

ԲԿԳ–Հայաստան գործողությունների երկրորդ ծրագրում ՏԿԵՆ պարտավորությունները վերաբերում էին SMS հաղորդագրությունների միջոցով համայնքային միկրոհարցումների իրականացմանը, տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն ոլորտներում հանրային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավմանը, ինչպես նաև հանրապետության 17 խոշորագույն (20000 կամ ավել բնակիչ ունեցող) համայնքներում ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանը, մասնավորապես, համացանցային կայքերի գործարկման և ավագանու նիստերի առցանց հեռարձակումների միջոցով:

Վերոնշյալի համատեքստում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանվեց 3000 կամ ավելի բնակիչ ունեցող համայնքի համար համացանցային պաշտոնական կայք ունենալու պարտավորությունը, իսկ 10000 կամ ավելի բնակիչ ունեցող համայնքի համար՝ ավագանու նիստերը և հանրային նշանակության այլ միջոցառումները համացանցում առցանց հեռարձակելու պարտավորությունը:

Ներկա դրությամբ այդպիսի հեռարձակումներ են իրականացվում հանրապետության ավելի քան 40 խոշոր համայնքներում, որոնց բնակչության հանրագումարը կազմում է հանրապետության ամբողջ բնակչության ավելի քան 70

տոկոսը: Բացի այդ, այս պահին շրջանառվում է նաև օրինագիծ, որով նախատեսվում է ավագանու նիստերի հեռարձակումը համացանցում պարտադիր դարձնել նաև 3000 կամ ավել բնակչություն ունեցող համայնքների համար:

Հանրապետության համայնքների կեսից ավելին շահագործում են համացանցային կայքեր, որոնցում, ՏԻՄ-երի գործունեությանը վերաբերող տեղեկատվությունից բացի, առկա են նաև համայնքային նշանակության խնդիրների բարձրացման և կայացվող որոշումների ընդունման գործընթացներում բնակիչների մասնակցության համար նախատեսված մի շարք գործիքներ:

Տեղական մակարդակում մասնակցայնության ընդլայնմանն են նպաստում նաև «մեկ պատուհան» սկզբունքի հիման վրա հանրապետության **45** համայնքապետարաններում գործող քաղաքացիների սպասարկման գրասենյակները (ՔՍԳ), որոնց շնորհիվ բնակիչները հնարավորություն են ստանում մասնակցելու համայնքի կառավարմանը: ՔՍԳ-ներից **36**-ը գործում են միավորված բազմաբնակավայր համայնքներում:

ԲԿԳ-Հայաստան գործողությունների երրորդ ծրագրում ՏԿԵՆ-ի ստանձնած պարտավորության նպատակը համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հրապարակումն էր միասնական էլեկտրոնային հարթակում:

ՏԿԵՆ-ի և Հայաստանի Իրավական Տեղեկատվական Համակարգը (ՀԻՏՀ) (Armenian Legal Information System (ARLIS), **www.arlis.am**) սպասարկող՝ ՀՀ արդարադատության նախարարության «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲ ընկերության միջև ձևավորված համագործակցության արդյունքում, այսօրվա դրությամբ, www.arlis.am կայքի «ՏԻՄ ակտեր» բաժնում զետեղված են Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ 2003թ.-ից մինչև այժմ ընդունված բոլոր նորմատիվ իրավական ակտերը:

ԲԿԳ-Հայաստան գործողությունների չորրորդ ծրագրով ՀՀ ՏԿԵ նախարարությունը 2018 թվականին ստանձնեց «Համայնքային կայքերի արդիականացում. տեղական մակարդակում հրապարակայնության, թափանցիկության և մասնակցայնության ամրապնդում» վերտառությամբ հանձնառությունը, որի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել երկու ուղղությամբ՝ օրենսդրության բարելավում և համայնքային կայքերի գործառնական հնարավորությունների ընդլայնում:

Հանձնառության իրականացման արդյունքում օրենսդրորեն ընդլայնվել է ՏԻՄ-երի կողմից պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվության ծավալը, համացանցային կայքերում ներդրվել են լրացուցիչ գործիքներ, որոնց միջոցով համայնքի բնակիչը հնարավորություն ունի մասնակցելու, մասնավորապես, ՏԻՄ-երի կողմից մշակված որոշումների նախագծերի քննարկմանը, գնահատելու իրեն մատուցվող

ծառայությունների որակը, համայնքում առկա խնդիրների վերաբերյալ առցանց եղանակով դիմելու համայնքապետարան և այլն:

Տեղին է նշել, որ ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից բաց կառավարման գործընկերության շրջանակներում տեղական ինքնակառավարման բնագավառում ներդրված ջանքերը բարձր գնահատականների են արժանացել նաև միջազգային հարթակներում:

Մասնավորապես, 2015թ.-ի հոկտեմբերին Մեքսիկայի Միացյալ Նահանգների Մեխիկո քաղաքում, «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության միջազգային համաժողովի շրջանակներում անցկացված մրցանակաբաշխությանը, որին Հայաստանը մասնակցում էր առաջին անգամ, ԲԿԳ պարտավորությունների կատարման համատեքստում արդիականացված համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ) արժանացավ բարձր մրցանակի՝ զբաղեցնելով Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում առաջին տեղը և ստանալով, այսպես կոչված, «Տարածաշրջանային չեմպիոն» կոչումը: Մրցանակաբաշխությանը Հայաստանը ներկայացրել էր «Համայնքային կառավարման համակարգի ստեղծում և ներդրում ՀՀ համայնքապետարաններում» նախաձեռնությունը: Մրցույթում այն ներկայացվեց «Խելացի համայնք» անվանմամբ: